Ձև N3

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 460

*հերթական համարը*

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

*ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքը (Ալաշկերտ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ*

*(Մեծամոր համայնքը (Ալաշկերտ բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

*ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքը (Ալաշկերտ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արմավիր-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝*

| Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը |
|---|---|
| 04-088-0114-0038 կադաստրային ծածկագրով 0.4749 հա մակերեսով հողամասից գյուղատնտեսական նշանակության վարելահող 0.1044 հա, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր 0.0084 հա | 04-088-0114-0038 կադաստրային ծածկագրով 0.1044 հա և 0.0084 հա մակերեսներով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողեր |

2.Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Ալաշկերտ բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել Ալաշկերտ բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

| | | |
|---|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝* | | |
| | | Ա. Ղուլարյան |
| *Հանձնաժողովի քարտուղար՝* | | |
| | | Հ. Դավթյան |

Երևան, « 18 » «դեկտեմբերի» 2023թ.